№ 198 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

№ 198 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում դրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՐՈՒՆԻ

Միքայէլեան պրօսպ. № 24/4 տանը գտնվող

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ

ԼԵԶՈՒՆԵՐ են սովորեցնում 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. ամսական 5 ռուբլի։ Ընդունելութիւնն ամեն օր 4—7 ժամը։

Կուրսերի հիմնադիրը՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(առ.) 5—10

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“

Արմենակի-բազար տուն Զուժուխանէի 2-րդ յարկ

Վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թռիով շատ մատչելի գներով։

առ. Հ. Ն. 7—20

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

և

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Ընտանիքներում

Ա. Մ. ԵՂԵԿԵԱՆ

Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21։

առ. 5—20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նկատողութիւն. Վերջին տեղեկութիւններ. Աւազակութիւնը Նուխու գաւառում. Գաւառական ցաւերից. Մի պատմ. Պարզ խօսքեր. Վերջին փամփուշտը. Ժողովրդական տարրի նպատակը. Ազգասպանական հայ զբաղողները. Նոր-Նախիջևանի ընտրութիւնները. Նամակ Նոր-Բայազէտից. Բաց նամակ խմբագիտ Միհրանի և նմաններին. Նամակներ խմբագրութեան։ Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրեսէ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

I

Վերջին շաբաթները «Մշակի» էջերում լոյս տեսան մի շարք «Նամակներ խմբագրութեան», որոնց հեղինակները շօշափում էին ինքնապաշպանութեան, Թիւրքահայասանի, սօցիալիզմի, յեղափոխական քաղաքականութեան, սակտիկայի և ուրիշ մի քանի խնդիրներ։

Այդ նամակները որոշ հետաքրքրութիւն էին զարթեցրել, որովհետև որոշում էին գործող ազգասան խմբերի բաժան դիրքերը և պարզում էին, թէ ինչպէս են այդ մարդիկ ըմբռնում հասարակական և քաղաքական խնդիրները։

Նամակների հեղինակները մի քանի աչող փորձեր տուին և քննութեան սեղանի վրա դրին վիճելի խնդիրները, բայց գժաղդաբար շատերը չը կարողացան կենտրօնական շօշափած խնդիրների վրա և շեղվեցին դէպի անձնական հաշիները մաքրելու և միմեանց անուանարկելու ուղիները։

Այդ ձևով վիճաբանութիւն շարունակելը անկարելի է։

II

Վիճաբանութեան մասնակցողները պէտք է մի բան մշտապէս իրանց աչքի առաջ ունենային, այն է լոյս սփռել այն հանգամանքների վրա, որոնք պարզանում են հրապարակում դրված հարցերը։

Միմեանց ծաղրելով կամ հայհոյելով հարցերը չեն հեռանում և չքանում առպարէզից։ Վիճելի և կ ճռռտ էլեմերը մնում են իրանց նախկին վիճակի մէջ, կը յոգնեն վիճողները, կը դադարեն փոխադարձ վիրաւորանքները, բայց չը լուծված հարցերը նորից կը յուզեն մտքերը և նոր թիւրիմացութիւնների սաիթներ կը դառնան։

Սկսած վիճաբանութեան մէջ բնորոշ էր այն, որ գործի մարդիկ փորձում էին միմեանց հաշիւ տալ իրանց արածի, իրանց հասկացածի վերաբերութեամբ և հարթել իրանց գործունէութեան ճանապարհը առաջիկայի համար, բայց շատ շուտ ոտք կոխեցին անձնական յարաբերութիւնների հողի վրա և սկսեցին միմեանց հիւրասիրել վիրաւորական ոճերով—խօսքերով։

III

Հնարաւորութիւն տալով նամակագիրների արտայայտել իրանց կարծիքները կամ հերքել ուրիշների հայեցակէտները, մենք կը ցանկանայինք, որ լրագրի էջերում տեղ գտնողները լաւ հասկանային, որ մեզ և ընթերցողին կարող է այդ վիճաբանութիւնից հեռաքրքրել միայն այն, ինչ որ լոյս է սփռում մտաւոր-հասարակական հոսանքների և նրանց ընթացքի վրա, իսկ կողմնակի և անձնական հաշիները պէտք է մնան հեռու բոլորովին։

Յարձակումները, միմեանց պախարակելը և սոսկալի մեղադրանքների ենթարկելը միայն այն ժամանակ կարող են բարոյական նշանակութիւն ունենալ, երբ նրանք կրում են լուրջ մերկացումների ընթացքութիւն և նպատակ ունեն որոշ հասարակական գործ կատարել։ Իսկ երբ նրանք գործ են ածվում միայն իբրև պօլեմիկայից խոյս տալու մի ձև—դա զուրկ է բարոյական ընդյիցք։

IV

Վերև յիշած հարցերից վերցրէք, որը կամենում էք, նա հետաքրքրական է և մշակութեան արժանի։ Խօսեցէք ինքնապաշպանութեան կազմակերպութեան մասին, յայտնեցէք ձեր խորհրդածութիւնները Թիւրքա-հայկական հարցի լուծման եղանակների և բռնելիք դիրքերի մասին, քննեցէք՝ թէ ինչ չափով կարելի է ձեռնամուխ լինել սօցիալական ծրագիրների գործնական իրագործութեանը և այլն։

Եթէ այդ և դրանց նման հարցերի քննութեան վերաբերութեամբ կարող էք նոր բան ասել և լուրջ խորհրդածութիւններ հանդէս բերել, դրանով դուք մի քայլ առաջ գնացած կը լինէք և նպաստած հրապարակի վրա դրված հերթական հարցերի լուծման։

Այլապէս բանակռիւը կորցնում է իր բարոյական գոյութեան իրաւունքը։

Մենք յայտնում ենք այդ ի գիտութիւն այն բոլոր անձերի, որոնք ուզում են մեզ իրանց զրութիւնները։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կաթողիկոսի դիւանը հեռագրել է Թիֆլիսի թեմի առաջնորդին. «Նորին Վեհափառութիւնը հրամայում է ծանուցել հրանգով ամբողջ թեմում, որ կրօնը պարտադիր ճանաչվի ցնոր կարգադրութիւն և այդ մասին հաղորդել ուսուցչական համագումարի նախագահ Իսահակ Յարութիւնեանին»։

Դիւանապետ Ներսէս վարդապետ

—

Թիֆլիսում երէկ լուր տարածվեց, որ Բագուում իբր թէ սկսվել է հայ-թուրքական ընդհարում։

Դա բոլորովին անհիմն լուր է։

Ճիշտ է Բագուում սեպտեմբերի 10-ի երեկոյեան տեղի են ունեցել ծանր դէպքեր, բայց բոլորովին ուրիշ հողի վրա։ Վարչութիւնը հրապէնի այժով ցրվել է յեղափոխականներին, որոնք խմբված են եղել Սեվատօպոլ և Բերլին պանդոկների մօտ։

Գաղաքը մի քանի ժամ սարսափի մէջ է եղել։

Հետեւեալ օրը, սեպտեմբերի 12-ին, քաղաքում արտակարգ ոչ մի դէպք տեղի չէ ունեցել։

Սեպտեմբերի 11-ի ընդհարման ժամանակ սպանվել և վիրաւորվել են մարդիկ, որոնց թիւը սակայն ճիշտ դեռ չէ որոշված։

—

Ղազախի գաւառից, սեպտեմբերի 8-ին

Սովը անխուսափելի է մեր գաւառում. դեռ տարվայ սկզբումն ենք և շատ ընտանիքներ առանց մի կօպէկի կանգնած են սովի առաջ. թէ ինչ կը լինի մեր գաւառի և Շամշադինի գրութիւնը ձմեռ ժամանակ, երևակայել չենք կարող։ Նպաստամատոյց յանձնաժողովի ուղարկած 3000 ռուբլի նպաստը մի կաթիլ է անսահման ովկիանոսում։ Անասունների ժանտախտը իր կատարածով լրացնում է թշուառութեան պակասը. ուժ գիմենք, ուժից օգնութիւն խնդրենք, չը գիտենք. մեր ժեծամեծները ծրագիրներով են զբաղված, այնպիսի ծրագիրներով, որոնցով ոչ մի քաղցած մարդու փոր չենք կարող կշտացնել. ասացէք, ինչ անենք։

Սեդրակ

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՈՒԽՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Նուխու գաւառում աւազակութիւնները հետզհետէ լայն ծաւալ են ստանում։ Աւազակային խմբերը վխտում են չորս կողմը։ Գրեթէ դադարել է հաղորդակցութիւնը. աւազակների սարսափը մեծ է։ Ասում են, որպէս թէ աւազակախմբերի մէջ մէկ թէ երկու խումբ հայեր էլ կան։ Բարեբաղդաբար Նուխու գաւառի աւազակները ճանապարհորդներին միմիայն կողոպտում են, և միայն դիմադրութեան և ըմբոստութեան դէպքում կարող են սպանութեան դէպքեր հանդէս գալ։ Աւելի նշանակալից այն հանգամանքն է, որ շրջանումս աւազակութիւնները, կողոպուտները ու յարձակումները կատարվում են առանց ազգի ու կրօնի խտրութեան։

Թւում է, որ վերջերս աւազակային խմբերը սկսել են փոխել իրանց տակտիկան. նրանք ձգտում են հարուստ անձանց գերել և մի որոշ վարձագին պոկելուց յետոյ նորից բաց թողնում գերվածին։ Գերելու այդ ձևը մինչև օրս գրեթէ թուրքերի վերաբերմամբ է գործ դրվել, իսկ վերջերս մի երկու օրինակ էլ հայերին է պատահել։ Վարդաշէնցի Յովհաննէսին գերելով՝ 500 ր. ստանում և բաց են թողնում. իսկ այժմս էլ Խոշ-քէշի տերտերի տղային են բռնել և 300 ր. են պահանջում։

Հրաշալի թատերաբեմ։

Օգոստոսի 27-ին, երբ աւազակային խմբերից մէկը, Նուխուց դէպի Վարդաշէն տանող խճուղու ճանապարհը կտրած՝ բոլոր ճանապարհորդներին անխտիր կողոպտելիս է լինում և անտառի մէջ պահում, այդ իսկ ժամանակ կառքով անցնում է Աղալուի պրիստաւ Իսմայիլ-բէկիը կնոջ և մօրն ուղեկցող թուրք տարածիկը։ Աւազակները հրամայում են կառապանին կանգնեցնել կառքը։ Երբ ըմբոստ կառապանը դանդաղում է կանգ առնել (խեղճ մարդ, երևի կարծել է աւազակները պրիստաւի կնոջը չեն յանդգնի դիպչել), իսկոյն գնդակահար է լինում և վայր ընկնում։ Այնուհետև երբ աւազակները (թռով 8—10 հոգի) փորձում են պրիստաւի կնոջ և թուրք տարածիկի վրա յարձակվել, տարածիկ Զալիլը աւելի ճարպիկ է գտնվում և հէնց առաջին գնդակով գետին է տապալում Սէրբիից փախած յայտնի և յանդուգն Ռամազան աւազակապետին, իսկ նրա ընկեր աւազակներից մէկին էլ վիրաւորում։ Ընկեր աւազակները տեսնելով իրանց իպէթ զեկավարի մահը, և երևի վախենալով ուրիշ տարածիկների օգնութեան հասնելուց, իրանց վիրաւոր ընկերին ձիու վրա դրած թողնում՝ փախչում են։ Զալիլ տարածիկը նոյնպէս վիրաւորվում է աւազակապետ Ռամազանի տարճանակից այն ժամանակ, երբ գնում է սպանված կարծած Ռամազանի 5 գծնի մտուղէր հրացանը և փամփուշտկալը վերցնելու։

Այս բոլորից յետոյ իշխանութիւնը ոչ մի միջոց ձեռք չէ առնում ճանապարհները ապահով դարձնելու։

Աւելի վատթար և աննախանձելի դրութեան մէջ են գտնվում այժմս քանվում, կրակի և սրի ճարպկ դարձած Արէշի բաղմաչարչար հայ գիւղերը, որոնք գտնվում են Եւլախ կայարանից ոչ հեռու։ Օգոստոսի 26-ին 100 հոգուց աւելի բաղկացած մի աւազակախումբ շրջապատելով Մահմադ-Թաւա հայ գիւղը, յանդուգն սպառնանքների տակ ստիպում է նրանց՝ իրանց կանանց ու տղամարդկանց ունեցած բոլոր ոսկի, արծաթ և այլ թանկագին իրերէ՝ իրանց տալ, հակառակ դէպքում... Եւ ինչ անէ հայ գիւղացին. ինչ չարին և չը մարեցին։

Հարցնող ով, փնտռող ով...

Արաբ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՅԱՒԵՐԻՑ

—

Գօրիս, սեպտեմբերի 2-ին

Մեր գաւառն էլ մէսների պէս իր ցաւերը, իր դարդերը ունի, որոնցից ազատվելու ոչ մի հնար, միջոց չունի խեղճ գաւառացին։ Երբեմն ցաւերը այնպիսի տեղերից են գալիս, որ մարդ մնում է շուարած, ասում են գիւղացիք։

Հարց ես տալիս ինքդ քեզ. «Ախը էս որ այսմն ա, որ էսպէս դառն օրին էլ մեր գլխից ցաւը անպակաս չէ մնում. ասում էինք՝ փառք Աստծու, էն քօհնա ադաթները կը գնան, կը պրծնեն. բայց էլի ամեն օր նոր չար սնաթի ենք հանդիպում։ Էն զակօնը, օրէնքները, որ պէտք է աշխատեն արդարութիւն մտցնել ժողովրդի մէջ, նա ինքն է նոր ադաթի կաշառակեր, նոր դայդի մարդիկ ուղարկում մեզ մօտ։ Չենք իմանում մեր մեղքը ինչ է, որ էսպէս մեզ պատժում են»։

Մեր II-րդ գաւառամասը պատիւ է ունեցել պրիստաւ ունենալու, բայց պրիստաւ եմ ասում հա։

Օգոստոսի 26-ին ինձ էլ վիճակվեց ներկայ լինել կաշառակերութեան դէպքի։ Խնձորեսկ գիւղի պաշտօնական մարդկանց երթևեկաց տան պատշգամբում կանգնած էին մի խումբ մարդիկ, որոնք բերել էին անցագիր ստանալու վկայականներ պրիստաւին՝ ստորագրելու համար։ Գիւղացիներին նկատելով, հրամայեց իւրաքանչիւրից 10—15 կօպ. հաւաքել. երբ փողը ստացաւ, ստորագրեց և յետ տուեց վկայականները։

Նոյն այս, մինչև այժմ մեր չ, տեսած և անտեղի տուրքը, բացի Խնձորեսկից, ուր մենք ներկայ էինք, նա վերցրել է Ուրդուսիչ, Խնձախ և Տեղ գիւղերում։

Այլ դէպք ևս։

Օրեր առաջ Տեղ գիւղացի երկու հայի թուրքերը գողացել, չարաչար մահով սպանել և բերել ձգել էին գիակները նրանց սահմանում։ Նախ քան գիակների բերելը, հայերը դիմել էին նոր պրիստաւին, նա անզօր էր գանվել ձեռք բերել, և ապա դիմել էին գաւառապետին՝ գիակները ստանալու համար մինչոցներ ձեռք առնելու։ Անցնում են մի քանի օրեր և գիակները ձեռք են ընկնում։ Պրիստաւը կանչում է սպանված 15 տարեկան տղայի հօրը և պահանջում է խոստացած հարիւր ռուբլին։ Ծերունի գիւղացին մնում է զարմացած այդ օտարոտի պահանջի համար։ Ճիշտ է, գիւղացին պրիստաւի ոտերն էր ընկել, աղ ու կրակ էր թափել, «տունս-տեղս, եզինքը, բոլորը քեզ կը տամ, հարիւր մանէթ կը տամ, եթէ որդուս դիակը ինձ յանձնես», այս բոլորը նա ասել էր իր մեծ կորուստը մտաբերելով, բայց մի այդպիսի խոստովանութիւն մի՞թէ կարելի է վաւերացնել և կանչել, ինչպէս պրիստաւն է կանչել խեղճ ծերուկին, ծեծել, հայհոյել և իբրև խոստացած հարիւր ռուբլին պահանջել։

Գիւղացիք այդ նկատելով, մէջ են մտնում և մի կերպ ազատում ծերունուն։

Եւ կան մարդիկ, որոնք փակ աչքերով վկայում են, թէ ժամանակիս ռամիկն անգամ վարչականներին յարգանքով, ակնածութեամբ և հաւատով չէ վերաբերում, վարչութեան պատիւը նսեմանում է ժողովրդի մօտ։

Ես էլ կասեմ, որ կառավարութեան պատիւը միշտ կայ, և միայն վերոյիշեալ պաշտօնեաների վոմանկներն են, որոնք իրանց գազիր, ագեղ վարմանքով մերկացնելով իրանց ներքինը, մերկացնում են և կառավարութեան ներքինը, որով և պատիւը նսեմացած է երևում։ Ամբոխի առաջ վարչական պաշտօնեան իր դիրքը պահող, իր կոչման վրա պէտք է լինի՝ յարգվելու համար «Դիւանի, օրէնքի մարդը աղայանա պէտք է լինի», ասում է ժողովուրդը։

Փառք տուէք, որ անցագիրը անվճար յայտարարվեց. բայց մինչևօրս ձրիապէս ստանալու մի դէպք չէ պատահեց մեզ։ Մի տարվայ անցագրի համար գրոնը, տանուտէրը իրանց բաժինն են ստանում, նոր պրիստաւն էլ իրանը։ Մնում է վկայական ստացող և անցագիր տուողը. նրան էլ եթէ բարի բռնէին հանդիպեցիր՝ 50 կօպէկով պրծնում ես. եթէ «նոսիերը» կիտեց, ռուբլիով էլ պրծնես, փառք տուր Աստծու։ Այստեղ հարցի չենք առնում, որ երբեմն շաբաթով է աղողվում անցագիր ստանալ։ Անցագիր ստանալու համար գիւղացիք մի շարք ծախսեր են ունենում և քանի օրով էլ գործից զրկվում։ Մենք ուրախ ենք, որ կրկին վճարով լինի անցագիրը, քան թէ ձրի, որ մեզ համար երբեք նշանակութիւն չունի։

Աւաւսիկ մեր հարիւրակ ցաւերից մէկը. դէհ ճար տուր, բժիշկ։

Վերոյիշեալ զեղծումների մասին գիմել ենք գաւառապետին և սպասում ենք հետևանքին։

Սաղանդարեան

ՄԻ ՊՏՈՑՏ*)

(Ճանապարհորդական ակնարկներ)

Ռ. Աթանասեան

—

Կուրի հրաշալի ձորով, նրա խորունկ և կատաղի, փրփրալից հոսանքով ձգվում է Ախալցխայից Ախալքալաք տանող սիրուն խճուղին։ 68 վերստ անդադար բարձրանում ես և չես կշտանում դիտելով այս վեհ, վիթխարի բնութիւնը, այս լեռներն ու քարափները, որի ամեն մէկի տակից թաւշեայ ծաղիկների միջից գլորվում են հարիւրաւոր աղբիւրակների պարզ, սառնորակ, փրփրուն կաթսաները։

Զարմանում ես և այն տոկունութեան, այն աշխատասիրութեան վրա, որ գործ է դնում այս նեղվածքի մէջ ապրող գիւղացին, որը այնքան գուրգուրում, այնքան փայփայում է ամեն մի թիզ տարածութիւն, ուր կարող է թափել իր քրտինքը, միայն թէ արդիւնաւորի երկիրն ու ապրեցնի իրան ու իր ընտանիքը։

Ողջ հովիտը իրանից ներկայացնում է արհեստական ամֆիթեատրոններ մէկը միւսից բարձր, իրար վրա դրսված, իսկ դրանց վրա ծաղկում է կուլտուրան՝ սկսած գանգուր գեռնախնձորից մինչև լայնատերև ծխախոտը։ և Տաճկաստանից գաղթած թուրք երկրագործի ողջ ընտանիքը արևածագից մինչև արևի մուտքը բահով ու թիով փորփրում, ջրում, փուխրացնում, կտրում, պարարտացնում, նոր թուփեր է շինում այս լեռների մէջ, նոր նուաճումներ անում...

Բանի բարձրանում ենք դէպի վեր, քանի մօտենում ենք Ախալքալաքին, այնքան աւելի հարստանում ու փարթամանում են լեռները ալպիական բուսականութեամբ։

Եղներ, կովեր, հորթեր, երինջներ խոշոր ու գեր, կուշտ ու անհոգ արածում են մինչև կուրծքը հասնող այս խոտերի, ծաղիկների մէջ... Որպիսի հակադրութիւն դաշտավայրի նիհար, ոսկր ու կող ընկած, յոգնած անասունների հետ, որոնց ես տեսայ Թիֆլիզ-Գօրու շրջանում։

Այստեղ ինքը բնութիւնը ցոյց է տալիս բնակչութեանը պարապմունքի այն ճիւղը, որով նա պէտք է պարապի. դա սնկասած անասնապահութիւնն է, ալպիական, հասարակական լայն կաթնատնտեսութիւնը, որի աղղուութիւնը կասկածից դուրս է, այն ինչ տեղացիները, որոնց մէջ հայերը 86% են կազմում, ընդհակառակը գարուց ու ցորենից դէնը չեն գնում. և չէ անցնում տարի, որ ողջ ցանքը երկրի այս կամ այն շրջանում չրվնասվի կամ ցրտից, կամ անձրևից, կամ կարկուտից, իսկ ամենից շատ՝ դաշտային մկներից և հացաբոյսերի դանդաղ ըստ էութեանից. բայց ամեն ինչ Աստծու վրա գցելով, ողջ մեղքը իրանց մեղքերին վերագրելով, որպէս պատիժ նախախնամութիւնից, ոգէս ժողովուրդը շարունակում է երկրագործութիւնը իր քարացված ձեւերում և օր առաւ աղքատանում, տարից տարի քայքայում իր տնտեսութիւնը...

Վերջապէս ձորից դուրս ենք գալիս. արդէն երևում են զինանոցների կարմիր կտուրները—դա Ախալքալաքն է։

Մտնում ենք քաղաք. ցածր մի-յարկանի տներ, տափակ կտուրներով, քարաշէն սև շինվածքներով, խոնա. աւելի մի գիւղի տպաւորութիւն է թողնում քան քաղաքի. մեկ, առանց բուսականութեան, երկու տասնեակ ուղղանկիւն, բաւականին լայն, բայց ցեխոտ փողոցներով, ալմկակից բաղարով, բազմաթիւ դայֆէխանաներով։

Կառքը կանգնում է միակ հիւրանոցի առաջ։

Երեք օր մնացի Ախալքալաքում. երկու բան այստեղ աչքի է ընկնում. մէկը բազմաթիւ, մեծածախս զինանոցն էր քաղաքի այն կողմը, իսկ երկրորդը՝ ներքին երկպառակութիւնները քաղաքի մէջ՝ Դաշնակցութեան շուրջը։

Ենորհիւ այն հանգամանքի, որ Ախալքալաքի շրջանը գրեթէ զուտ հայաբնակ է, 78 զուտ հայ գիւղերով, Դաշնակցութիւնը այստեղ գտել է պարարտ հող և երևան է եկել իր ողջ կէ պարանքով, բռնադատութեամբ ու ձգտումներով։ Նա նախ և առաջ զինել է ողջ ազգաբնակութիւնը, թէկէ դրա համար կարիք լինէր ծախել տալ գիւղացու վերջին կովը, ապա լցրել է գիւղերը իր զինտրութեամբ, դնելով իւրաքանչիւրի մէջ տեղացի ենթապետներ։ Երրորդ հաստատել է դատարան ու բանտ այդ ինստիտուտներին յատուկ բոլոր պարագաներով՝ սկսած մարդից մինչև գազակը։ Չորրորդ՝ ըստ իր բարեհայեցողութեան բաժանել է զանազան պաշտօնեներ. իսկ որպէս այդ բոլորի հետևանք՝ առաջ է բերել ժողովրդի մէջ մի զարմանալի ռեակցիա—բայց դեռ ես խուլ, մի դժգոհութիւն, որը աճում է ժամ առ ժամ, րօպէ առ րօպէ։

Ոչ մի տեղ իմ ճանապարհորդութեան ընթացքում ես չը տեսայ այնքան դժգոհներ Դաշնակցութիւնից որքան այստեղ։

Որպէս մի շատ ընորոշ փաստ յիշատակեմ այն քարոզը, որ տուեց տեղական քահանան, բաւականին ինտելիգենտ մի անձը, կիրակի օր, պատարագի կիսում՝ եկեղեցում՝ անպարզ բազմութեան առաջ, ներկայութեամբ դաշնակցական ողջ կազմի, նոյնիսկ շրջիկ-լիազօրի։

—Ժողովուրդ, Դաշնակցութիւնը մի չարիք է, որից որքան շուտ հեռանաք, այնքան բարդաւոր կը լինենք. երբէք մեր Ախալքալաքի հայ ժողովուրդը այնքան ճնշված չէ եղել որքան այժմ. բաւական է, հեռացնենք մեր վերից այդ ծանր լուծը. բաւական է, որքան նա քանից մեզ»։ Ահա տէր-հօր քարոզից մի քանի գունատ կտորներ...

Ցեռոյ միայն ես իմացայ ողջ գաղտնիքը, իսկ այստեղ եկեղեցում հասարակ ժողովուրդը ետևիս ձեռքերը բարձրացրած դէպի վեր ասում էր.

«Տէր Աստուած, տէր արարիչ, մեղայ քեզ, մեղայ...»։

Հէնց այն հանգամանքը, որ մի քահանայ համարձակվում էր եկեղեցում բռնութեան առաջ այսպիսի մի քարոզ տալ, ցոյց է տալիս դժգոհութեան այն աստիճանը, որով բռնված էին տեղացիք, չը նայած արհեստական այն միութիւններին, որոնք շտապով կազմակերպվում էին այստեղ, որոնք, ինչպէս և ամեն տեղ, իրանց մէջ պարունակում էին 90% անգիտակից հայ-քրիստոնեայ անդամներ՝ պատրաստ հարիւր անգամ «մեղայ քեզ, Աստուած, մեղայ» կրկնելու։

«Շատ, շատ լինել, և այդ շատը լինել որքան կարելի է շուտ», աղմուկ հանել, ցոյց տալ թէ գործում ենք, շատ ենք ուրեմն և ուժեղ ենք—ահա Դաշնակցութեան դեվիզը ամեն տեղ. հէնց դրա մէջն է իմ կարծիքով նրա անկման, և քայքայման ողջ գաղտնիքը։

Յաճախ պատահել էր ինձ լսել.

—Այս գիւղը 300 տուն է և բոլորը դաշնակցական են—պարծենում էր մէկը։

—Ի՞նչ գիւղ, բոլոր գիւղերը դաշնակցական են, ուղղում է նրա ընկերը։

—Ինչու, ամբողջ գաւառը՝ 200 հազար հայերն էլ դաշնակցական են, գրում է մամուլի մէջ մի երրորդ բայօնատպետ։

Եւ այսպէս ամեն տեղ քանակը և միմիայն քանակը, իսկ որակի մասին ոչ մի հոգս, ոչ մի մտատանջութիւն... միայն թէ շատ լինեն, բազմաթիւ...

Բնորոշ էր և մի այլ բան. Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի ազգաբ խնդիրը այս շրջանում։ Շատ բան լսեցի և ինտելիգենտներից, և քահանաներից, և գիւղացիներից, բայց ամենից հետաքրքիրը մի բարձր ուս ատիճանաւորի գովասանքն էր Դաշնակցութեան հասցէին. սա հաւատացնում էր ինձ, որ շնորհիւ Դաշնակցութեան տեղական մարմինների խորագիտութեան (распорядительности) իրան աջողվից խեղդել գաւառում հայ ժողովրդի մէջ ազգաբ շարժումները ընդդէմ մի քանի կալուածատէրերի։ Մարմինը զգուշացնում և սատում է գիւղացիներին, որ եթէ նրանք սկսեն ըմբոստանալ, կառավարութիւնը երկիրը «Թափի կը կապի և Դուրայի օրին կը գցի». այս բանը խոստովանեցին և գիւղացիները Բօղդանովկա գիւղում, մեղադրելով ինձ թէ՝

—Ադա ջան, բա որ այդպէս է, ինչո՞ւ մեզ չէ թողնիք մեր գլխի ճարը տեսնելու։

Խեղճերը ընդունում էին ինձ լիսլոզի տեղ։

Վերին ատիճանի ցաւալի էր ինձ տեսնել այս բոլորը, լսել, կարմրել և ոդքալ, սրտից ոդքալ, մանաւանդ, երբ քաղաքում կային բազմաթիւ ինտելիգենտ ոյժեր, որոնք զրված այս բոլորից, մի տեսակ հասարակական գործադուլ էին արել, գանգատվում ու բամբասում էին, ունենալով ձեռքի տակ փաստեր, փոխանակ կազմակերպվելու, միանալու և միացած ոյժերով գործելու յօգուտ այն ժողովրդի, որն այնքան տգէտ է, այնքան անօգնական, այնքան կարօտ լաւ բարեկամի և անկեղծ գործիչի...

Կարիք, մեծ կարիք կայ մեր գաւառներում խելացի, գաղափարական, գիտութեամբ զինված ոյժերի, բայց աւելի մեծ կարիք կայ մի խմբակցութեան, որը կազմակերպի գիւղացական միութիւններ, զարգացնելով ժողովրդի մէջ ինքնագործունէութեան ոգին։

Հեռու հոգաբարձութիւն, օպէկան, հեռու կոմիտէի օտարամուտ լիազօրներն ու հրամանատարները, որոնք վատ քահանայի նման միայն իրանց ծխականների թիւը շատացնելու վրա են մտածում, որպէս զի շատ կթեն, շատ հարստանան...

Իր տերը պիտի լինի ինքը ժողովուրդը... Ահա այն միակ եղրակացութիւնը, որ ես դուրս բերեցի այս պատմից յետոյ...

ՊԱՐԶ ԽՕՍԵՆՔ

—

Ոչ ոք չէ կարող ուրանալ, որ եթէ Ռուսաստանում Պետական Դումա չը գումարվէր, չէր կարող լինել էչմիածնի կենտրօնական ժողովի անունն անգամ։ Կաթողիկոսի սահմանադրական կոնգռեսը պարզ հետևողութիւն էր Ռուսաստանի ազատագրական շարժման։ Վաղուց մեր եկեղեցին, մեր ժողովուրդը զգում էր համաժողովի կարիք, վաղուց հնացել, փտել էին շատ կարգեր ու կանոններ և պէտք էր վերաստեղծել, վերաշինել նրանց։ Հարկաւոր էր յարմար միջոց—և այդ միջոցը ինքն իրան եկաւ։ Հանգամանքներն անարգել առաջ բերին համաժողովի միտքը և հարկաւոր էր իրականացնել։

Դրան հակառակ չէր և կովկասեան բարձր կառավարութիւնը։ Հովերն էին այդպէս արամադրում։ Դա թեկադրութիւն էր համատարած պահանջի. թեկադրութիւն ազատ մտածողութեան, իրաւունքի. մի երևոյթ, որ չէր կարելի մտքով անցնել մի Պլեվէի, կամ մի Գօլիցինի ժամանակ...

Հայերս մի վատ յատկութիւն ունենք։ Ագահ ենք եսամոլութեան մէջ, շատ պահանջող, բայց քիչ կատարող...

Ընդդիմութիւնների տակտիկան... Անժխտելի իրականութիւն էր Դաշնակցութեան բռնած ընթացքը ընտրութիւնների մէջ—միակողմանի, կուսակցական, նեղմտաց, խտրական... Քիչ էր մնում հայոց գործերի սիրով վառված միամիտ անհատը նահատակվէր կուսակցական կռուի առաջ, անհամար լուսանցքներ ընդունելով անհամակերպելի դէպքում, «փտած», «բուրժուա» մակդիրներ կուլ տանելով իր ստամոքսը—և անհատը հիասթափվում էր, ընդարմանում։ Ի՞նչ էր այս Վահ, մտաստվեր եմ, որ չը կամ «ընկերների» ցանկի մէջ։ Շշմեցնող էր սատիկ, յուսահատական, անվայելուչ։ Ո՞ւմ դէմ։

Երկպառակում էին, զօռով խտրութիւն ու խորթութիւն սերմանում։ «Մենք և դուք»—ի՞նչ կապրիս էր այս։ Ոսկի սարեր էինք երևակայում մեր առաջ, բոլորիս էլ մտածողութիւնը մի էր. վերանորոգութիւն—գոչում էինք միաբերան էլ ի՞նչ կար խորթ, ի՞նչ կար օտար, ի՞նչ կար կուլտուրա։ Մենք և դուք-ի կապրիզը, թէ՞ հացի խնդիր...

Բողոքի ձայնը անխուսափելի էր. խեղդելու տեղ չէր մնացել, լցվել էր՝ պիտի պայթէր...

Պետական Դուման փակվեց։ Բիսլբեսպաներն սկսվեցին մայր երկրում. իսկ նրա հետու ծայրում մի բուռն ժողովուրդ մեծ բիւրօկրատիայի մի փոքր հատուածի դէմ ազգային կռիւ էր մղում։ Էչմիածնում հաւաքվել էին ժողովրդի մի յայտնի կուսակցութեան ներկայացուցիչները և մեծամեծ, անիրագործելի պահանջներով ծրագիրներ էին մշակում։ Հոգևոր տէրը, ժողովի հրաւիրողը, ակնարկում է նրանց ժամանակի փափկութիւնը՝ «խոհեմութեամբ գործեցէք և շուտ վերջացրէք» խօսքերով։ Զեն ըմբռնում, տենդով բռնված հն մարդիկ, խոհեմութիւնից դուրս եկած, շուտ

*) Մեզնից անկախ պատճառներով ակնարկները ուշացան։ Ռ. Ա.

վերջացնելու փոխարէն ճառեր են թնդացնում. Խօսքը շատ, գործը քիչ։ Կարծես մարդիկ դիտմամբ կու

կարելի է կոչել 40 հոգուն) աւելի շուտ ըմբռնեց այսպիսի տարբական ճշմարտութիւններ, քան իրանց լիդիրները, որոնք վերջի ի վերջոյ նոյնպես տեսած եղան «յեղափոխական միջոցով ընարութիւններ կայացնելուց» և ստիպուեցան հրաժարվել և ասնմանափակվել հասարակ բեռաժարվելի։

Ահա միայն մի քանի նմուշներ Նոր-Նախիջևանի ընտրողական պայքարից։ Սրանք Նոր-Ջևանի ընտրողներն են, որոնք ապացուցանում են մի մուշներ են, որոնք ապացուցանում են մի բան միայն, այն է՝ մասաւոր ու իդեական մանակցում, ուրիշ ոչինչ։

Սարգիս

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

Սեպտեմբերի 5-ին

Սեպտեմբերի 3-ին, կիրակի, տեղս նորաբնակ։ Աստուածածին մայր եկեղեցին կասոց։ Ամառուածածին մայր եկեղեցին օծվեց երևանի առաջնորդական փոխանորդ Յուսիկ և Սնանի վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսների ձեռքով։ «Մշակի» ընթերցողները զուցէ լիշեն, որ 4 տարի սրանից առաջ, 1902 թ.ին, տեղական նախկին գործապան է Մուրադբեգեանի նախաձեռնութեամբ սկսվեց մեր եկեղեցու վերաշինութիւնը, որ եկեղեցու մասնաժողովը կապալով էր տուել ինժեներ պ. Միրզոյեանցին։ Հարկ եմ համարում մի երկու խօսքով բացատրել մեր եկեղեցու կառուցման գործը, որը շատերին անշուշտ հետաքրքիր կը լինի, թէ արդեօք Նոր-Բայազետի պէս մի աղքատ քաղաքի հասարակութիւնը, որ անտեսապէս կաշկանդված է ամեն կողմից, ինչպէս այդ կարճ ժամանակի ընթացքում աւարտել եկեղեցու կառուցումը։

«Դեղ կանգնի՝ գերան կը կտրի» ասում է ժող. առածը, և իրաւ ժողովրդի համերաշխ գործունէութեան և միաճամուռ աշխատութեան դէմ ոչ մի խոչընդոտ չէ կարող լինել, երբ նրա անդամները հոգով և սրտով կապված լինում գործին։ Ինժենէր Միրզոյեանցը, կապելով վերցնելով կառուցումը՝ ժողովրդի վրա էր թողել քար և աւազ բերելու, յատակը շինելու պարտականութիւնը՝ վերցնելով իր համար կապալային 21,000 ռ.։ Մի այդքան գումար էլ կարժէնար միւս, վերը յիշված նիւթերը և աշխատութիւնը, որ քաղաքի հասարակութեան պարտքն էր։ Սակայն ժողովուրդը քիչ փող ունէր եկեղեցու կասայում, ուստի քաղաքի հասարակութիւնը գործի կոչուաւ, որն իր այլով, որն իր ֆիզիկական աշխատանքով, որն իր փողով սկսեց մասնակցել իր սիրած եկեղեցու շինութեան։ Ամեն մի քնամնիք, խօսք չը կայ, իր նիւթական կարողութիւնն համաձայն, իր լուսան գցեց եկեղեցու կառուցման գանձարանը,—մարդիկ իրանց նուէրներով, կանայք՝ ոսկիներով, ծերը և պառաւները իրանց «հոգեպահուստով» և այլն հոգային մայր-եկեղեցու շինութեան ծախքերը։ Եւ այսօր յանկարծ ունեն մի վիթխարի, մի փառաւոր եկեղեցի, որը 50,000-ից աւելի արժէ և որտեղ մանողը ինքն էլ է փառաւորվում... Այդ տեսակէտից՝ քաղաքիս ամբողջ ժողովուրդը խորին ակնածութեամբ իր հոգեկալութիւնն է յայտնում պ. Մուրադբէգեանին, որը իր յաստ աշխատանքով գործի գլուխ անցաւ և հիմքը դրեց եկեղեցու շինութեան։ Շնորհակալութիւն նաև եկեղեցու մասնաժողովին և այլ արտաքոյ կարգի աշխատութիւն ցոյց տուող անձինքներին։ Պարծանք մեր արքատիկ քաղաքի աղքատիկ հասարակութեան, որը էշտիճի գնով, առանց գրսի օգնութեան սպասելու, մի կարճ միջոցում—4 տարվայ ընթացքում կանգնց մայր եկեղեցին և խաչը անկեց գլխին, որ Աստուն հայրենասիրի անչափ գնով, որը աքսոր գնալու խրատեց ժողովրդին՝ աւարտել եկեղեցու շինքը և խաչը գլխին կանգնեցնելը։

Յիշենք նաև այն, որ թէպէտ եկեղեցուն մի փոքր գումար պարտք է մնացել, սակայն յոյս կայ, որ քաղաքային վարչները այդ պարտքն էլ կը յանձնեն մօտ ապագայում։ Օծման հանդիսին ներկայանալու կամ մասնակցելու նպէրներով՝ եկեղեցու մասնաժողովը տպված տրաիրեցիներ էր ուղարկել մեր օտարարնակ քաղաքացիներին, որոնցից շատերը թէ իրանց ներկայութեամբ և թէ նուէրներով մասնակցեցին հանդիսին, որից յետոյ ժողովրդի մի մասը հաշ սարքեց՝ պատուելով եպիսկոպոսներին։

Սակայն չը մոռանանք յիշել մի աւելի կարևոր հարց, այն՝ որ ժողովրդի ինտելիգենտ դասի մէջ միաք է յղացել եկեղեցու բակում վերաշինել նաև հայոց ուսումնարանի համար մի ընդարձակ շինութիւն՝ թատրօնական բեմով, աւելի անհրաժեշտ քան եկեղեցու կառուցումը։ Եւ դա համար առաջնորդը ևս յայտնեց եկեղեցում, յոյս ունենալով որ գուցէ բաղդ ունենայ մի քանի տարուց յետոյ այսպիսի հանդէսով բաց անել նաև գաղրցի շէնքը։ Ցուսանք է սրտէ և ցանկանք մեր հասարակութեան աւելի տոկունութիւն, որ, չը զլանայ կառուցանել նաև գաղրցական մի նոր շէնք՝ իր ժանուվներին տեղաւորելու համար։

Դ. Սենեանան

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ԽՄԲԱՊԵՏ» ՄԻՐԶԱՆԻՆ ԵՒ ԻՐ ՆՄԱՆԵՐԻՆ

«Մշակի» № 172-ի, 189-ի, 195-ի և այլ համարներում զետեղված ձեր հակայեղափոխական յօդուածները ստիպում են ինձ, իբրև ազգանվան, մի քանի խօսք ասել ձեր ուղղութիւնի ուղղութիւնի։

Ամեն մի փոքր ինչ զիտակից յեղափոխական, լինի նա ինչ ազգութեան թեկուզ, ձեր «Խմբապետ» Միրզան, եթէ դուք ձեզ յեղափոխական եք յորջորջում և ժողովրդի անունից եք խօսում, դուք, առանց մի փոքր կասկածանքի, հակայեղափոխական եք.—հարց դուք ձաղում եք այն պարզ պատճառով, այն մեծ յեղափոխութիւնը, որի զէվիզն է տարբերութիւնը։

Մարքսիստական յեղափոխութիւնը, որի մասին դուք ձեր յօդուածներում գրում եք, ինչպէս ասացինք, ինչպէս ասում է ձեր «Խմբապետ» Միրզան։

Սատիկ տարօրինակ է լսել մի յեղափոխականից այն կարծիքը՝ թէ ռուսահայերը իրաւունք չունեն մասնակցելու ռուսական մեծ յեղափոխութեանը, թէ նրանք պրոֆէսիոնալ (արհեստակցական) միութիւնները կազմակերպելով, այսինքն իրանց ներքին անտեսական կեանքը բարեփոխելով, ինքնամոռ են տաճկահայկական դատին (պարոններ, ձեր ոգով ու անմաքուր միտումները ժողովրդի վրայ փաթաթելու համար մեր խօսի այն նուիրական դատի անունից, որի համար ընկել են քաջարի, իսկական յեղափոխականները և էլի կընկնեն առանց յուսահատվելու։ Մեր փոքր տաճկահայկական դատի հիմքը. զարդ կացեք յեղափոխական ժողովրդի արդար դայրոյթից) և թէ ռուսական յեղափոխութիւնը անիրականանալի, սատիկ դժուարին մի գործ է, որի իրականանալը կարօտ է հարիւրաւոր տարիների։ և, որ ամենացաւալին է, թէ «Դաշնակցութեան» ինչ գործն է, կռել ռուսական կառավարութեան դէմ,—այն «Դաշնակցութեան», որի դէվիզը, որի նպատակն է եղել, իր գոյութեան օրից, պաշտպանել ճնշված և կեղեքված ժողովուրդների ու դասակարգերի շահերը։ և, որ, նամանաւանդ Կովկասի հայկական իրականութեան մէջ, մեացած բոլոր սոցիալիստական և յեղափոխական կուսակցութիւններից աւելի մեծ շանսեր ունի ժողովրդականութիւն վայելելու և նրա տրադիցիաների արտայայտիչ ներկայանալու։

Այո, այդ վարակիչ հոսն է փչում ձեր բոլոր զրզուիչ յօդուածներից և այդ հասարակ պատճառից, առանց մի փոքրիկ կասկածանքի, դուք, պ. Միրզան, հակայեղափոխական էք։

Այո, տարօրինակ է և չափազանց ցաւալի։ բայց ինչ արած, եթէ փասատ իրականութեան մէջ է կատարվում։ Եւ մենք, տաճկահայ յեղափոխականներս, մեղապարտ կը մնանք մեր խղճի առջև և նոյնիսկ սատիկ անպատուութիւն կը լինի մեզ համար, եթէ աւելին չասենք, թէ որ մենք սանսարատիմամբ նայենք այս կատարվող հակայեղափոխական ակտի վրա, որը տրատաւորում է մեր անունը, ոտի տակն է տալիս մեր յեղափոխական լինելը և տոխրում է ազնիւ ու մարտիկ յեղափոխականներն երեսը զարձնել մեզանից։

Մենք, տաճկահայերս, ոչ մի թարոյական իրաւունք չունենք պահանջելու (եթէ աւելին չասենք) ռուսահայերից իրանց ամեն մի հոգս թողնել և միայն տաճկահայերիս մասին մտածել։ դա յեղափոխականին վայել չէ,—դա էլ հակայեղափոխութեան մի տեսակն է,—այն պարզ պատճառով, որ մենք պարապիսների պէս ուզում ենք մնունդ գտանալ, առանց մեր սեպհական ջանքերիս։ Մենք պէտք է լինենք մեր յեղափոխութեան տէրն ու զեկավարը, ապա այն ժամանակ նոր իրաւունք կունենանք ասելու թէ մենք յեղափոխական ենք, և հասատ համոզված լինելով, որ ամեն մի գիտակից յեղափոխական ժողովուրդ չի զլանայ իր վերջին կօպէյկներով, իր վերջին և նոյն։ իսկ յուսահատ ջանքերով օգնելու, օժանդակելու մեզ, տաճկահայերիս, յանուն զըժբախտ տաճկահայկական դատի, որը, մի մեծ շրջք անշրիմ նահատակների, հերոսների նուիրական մասունքներ է ամփոփել իր ապրիւնում ծոցում։

Պէտք է լինեն յեղափոխական, բառի իսկական իմաստով, և ոչ թէ լալկան, բայց պահանջկոտ պրոտեստասիոներ, որը պատիւ չէ բերում մեզ, տաճկահայ յեղափոխականներիս, և թէ տաճկահայ դատին։ Ուրեմն հեռու կենանք հակայեղափոխական ձգտումներից և դուրս քշենք մեզանից այնպիսի բարեսիրդիր յեղափոխականների, որոնք չը կարողանալով ծառայել ճնշված ժողովրդի շահերին, բայց անուն հանելու ցաւով բռնված, Ներսոնների պէս, շան պոչն են կտրում կամ ամբողջ քաղաքը կրակի մատնում, որպէս զի պատմութեան մէջ իրանց մասին միշտ խօսեն։

Տաճկահայ Միհրան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, սեպտեմբերի 7-ին

«Մշակ»-ի 173-րդ համարում Անիից իմ գէմ զրված նամակը լոյս տեսնելուց յետոյ՝ որքան որ արդար զայրոյթով լցված էի դիմաւորեալ նպատակով գրված այդ նամակի առիթով, սակայն միւս կողմից հանդիսա էի, հաւատացած լինելով, որ կը պարզվի այդ նամակի կեղծիքը, քանի որ գիտէի և հանգիստ էր խիղճս, որ Անիում ոչ մի սիպալ բան չունէի արած, որով ես գայթակղութիւն պատճառէի ուրեմ մէկին։ Այս առիթով իմ ուզի տարբայ ընկեր և մօտիկ բարեկամ՝ տեխնօլոգ Արամ Մալխասեանցի և վարդապետապատիկների հերքումները տպեցին «Մշակ»-ի 177, 187 և 188 համարներում, սակայն ես լուռ էի և հաւատացած, որ այդ հերքումները Մարիկի իրաւագանական բաժնի հինգ գոյութիւն չունեցող երևակայական ուսանողների դէմ է, որովհետև ուսանողը թոյլ չէր տալ գործելու այն, ինչ որ յատուկ է փողոցային մարդուն։ Համոզված էի, որ այդ կեղծ նամակի հեղինակը մի մութ և անարժան թշնամի անձնաւորութիւն է, որը կամեցել է այդպիսի սուր ճանապարհով վրէժխնդիր լինել ինձանից անձնական որևէ հաշիւներից զրված։

Այժմ ես ունեմ վաւերական փաստաթղթեր, որոնք երևան կը գան իր ժամանակին ապացուցանելու՝ թէ այդ նամակի տակ տարբերվող Խարիսվի հինգ ուսանողները մոլորեցին անձնաւորութիւններ են և բոլորովին գոյութիւն չունեն, որի համար և կարևոր եմ համարում «Մշակ»-ի միջոցով հաղորդել այս մասին ընթերցող հասարակութեան և գիտութիւն, յուսալով, որ յարգելի խմբագրութիւնը չի զլանայ իր կողմից արդարութիւնը պարզելու։

Բարգէն վարդապետ

Թիֆլիս, սեպտեմբերի 5-ին

Յարգելի խմբագրութիւնը պ. Ա. Բ.-ի բերանով մի քանի նպատաւոր տող շնորհելով իմ՝ Թէօդոր դը Բանվիլի «Ծոկրատ և իւր կիները» թարգմանութեանը, ապէր է ընձեռում ինձ՝ որ ես էլ մի քանի տող գրեմ և յանձնեմ ընթերցողի բարեհայեաց ուշադրութեանը։

Շնորհ արէք ինձ՝ տեղ տալ այդ քանի տողին։

Թէօդոր դը Բանվիլ մի փիլիսոփայ թատերագրող էր, ինչպէս կը տեսնեն ձեռնտա ընթերցողները իրանց մատուցված ներկայ երկի մէջ, որպէս խորիմաստ փիլիսոփայ բանաստեղծ էր Լէօփարդի։ Երկուսն ևս ամբիծների արժանի, նրանց խորաթափանց տեսութիւնները և վերապաց մտքերը այդ բարձրութիւններից մտաւոր ու բարոյական աշխարհի վրա ծաւալելու համար։

Երկու ծայրացած հակադրութիւններ կան սոյն երկի մէջ։ Ծոնական հոգին՝ Սոկրատ և զդայնական մարմինը՝ Քանտիպ։ Որքան մէկը, որպէս հոգի, սլանում է դէպի աստղերը և սաւառնում է լուսաշող երկնքում, այնքան միւսը, վայրաքարշ մարմին, մնում է գետնին կիպ և աչքը նիթականին յառած։ Սոկրատ մտածում է՝

«Ողորմելի և վայրաքարշ մարմինը
Ենթակայ է ամեն տեսակ աղէաքի։
Իսկ ատոդերի հաւասար
Բարձր բարձր թռչում է
Եւ լուսաշող երկնքում
Սաւառնում է մեր հոգին...
Դիշերի մէջ և խաւարուտ քուսի
Վսեմական սոսկումներում ապրում է
Եւ անդրդի անէութեան մէջ լողում։
Մահվան դէմ էլ նա գտնում է ապատան
Իւր իսկ բենկ լաւութեան մեջ»

Իսկ Քանտիպ դատում է նրան՝

Պատահել է քոանըշորս ամբողջ ժամ,
Մէկ արևից մինչև միւսի ծագելը,
Արձանի պէս մեացել է դա անշարժ՝
Մտածմունքի խորքն ընկած, անտարբեր՝
Դիշերը է սև թէ արշալոյս վարդաքող.....
Միայն քառասուն տարեկան է Սոկրատը։
Բան չեմ ասում, հանճարեղ է, արդարև,
Բայց ասացէք, ինչ կը լինի այդ խենթը,
Որի աչքը թափառում է ամպերում,
Երբ որ ձիւնը ճաղատ գլխին մի օր դայ։

Հա, ինչ կը լինի, ինչ պիտի անեն, ինչ պիտի ուտեն, քամի են կուլ տալու թէ ծուխ։

Այդ երկու ծայրերի խառնուրդից բարեկաւուելով գոյանում է աթէնական կեանքը, ուր այր և կին առաջ են բերում սքանչելի հայրենասիրական և վսեմ գեղարուեստական կեանքը, նախանձելի զարձնելով Աթէնքը յունական բոլոր քաղաքներին։

Այդտեղ մի երկրորդ հակադրութիւն է հանդիսացնում Թէօքօր դը Բանվիլ—աթէնական նրբաճաշակ, բարձր քաղաքակրթական կեանքը և սպարտական բիրտ զինուորական կացութիւնը։ Կարդացէք թնդրում եմ, այն կռուը՝ ուր Սոկրատ, խօսեցնելով իր նիրբին դեը, մի աստուածային կախարդիչ լուսով փայլեցնում է իր աթէնական քաղաքը և ձգտում է ամբողջ աշխարհի վրա սփռել նրա գերազանց շղթը և կնքում է խօսքը՝

Զախորդութեան ծոցում մեծցած մի երկրում
Դեսեմ գործեր վսեմ տաղերից են ծնվում։
Լինենք այնպէս, որ երբ յանկարծ օրհասը
Դայ մեզանից Ալկամենին խլելու
Կամ պատանի Եւրիպիդին, շատ իսկ մեծ
Բաղաքացու մասին խօսած թող լինի,
Արենացի՝ Ի՛ զրելով իւր հոմար։
Աստուածները, որոնց կրքոտ եմ խօսում,
Մեզ են նայում Ակրոպոլսի բարձունքից։
Ուստի գործի դուք ողջ՝ վրձին, քնար,
Դուր,
Եւ՝ որ մտնում ես Ծիրանի թեն՝ իլիկ։
Ցանենք ցորեն, ծաղիկն ու ծառ մեծցընենք,
Կիպատուուծներն երդենք հակայ, տարշենք կուռն,
Եւ անպաճոյճ ոգին պահենք անցելոյ.
Զի, լինելով ամենամեծ, կը լինենք
Հզօրագոյն և այդպիսով անվրէպ
Մենք աշխարհներ կը գրաւենք։

Այստեղ կանգ եմ առնում և վերջացնում, թէպէտ դարձեալ ունենամ կարևոր նշանագրելիք։

Կանգ եմ առնում մեր հայրենիքի ուրբեր առաջ։ Ո՞ւր են մեր տաղերը, ուր այն հրաշալի լեզուն, որին պատրաստ ածեն ատուածային կրքերը և նրանով հրաւիրեն արիւնքամ նահատակ ժողովրդին, որ զարիր է կրում իր ուսին, չընկճվել ժամանակիս ոգեսների ճնշման տակ և սիրտ տանել, ոգին բռնում ժողովվելով, վերադարձնել քանզվածը և վերստեղծել հինը նորոգ փառաւորութեամբ։

Աւելորդների տակից վերերևցուր փառքդ, ով ժողովուրդ։ Թող միւս, անգամ զղջանչն կաթուղիկների բարձրութիւնից զանգերդ, որոնց երբեմն խրոխտ հնչման տակ ծալիծալ ծածանվում էին Շերակի լայնարձակ դաշտերի վրա կաթնամզի խնկագոյն հասկերդ ցորենի, և ծաղկոցաձորերում ծիծաղաբաղ ժրաջան էին և շրջնդց հանում ամենագան ծաղիկներդ, իսկ լարդիների տերունների միջով խսսում էին գիւցազն նախնիքներիդ ոգիները։ Մի ընկճվիր, ով ժողովուրդ։ փուլքերիդ տակից Ամենում վերերևցուր փառքերդ թող վերարին հոացնեն արիւնն երակներումդ և դու մի անգամ էլ՝ մէջքդ շեռակ, ճակատդ բարձր՝ ձայն տուր մարդակերպ ցորնիներին, թէ դու ես երկրի տերը և քո գիւցազն պապերի շիրիմների պահապանը։ Նոր կեանք. նոր կեանք։

Ա. Մ. Եղեկեան

Թիֆլիս, սեպտեմբերի 7-ին

Ազատչում եմ, յանուն մարդասիրութեան, ձեր պատուական լրագրում հրատարակել բարեհաճէք այս համառօտ նամակը։

Այս կամ այն հիմնարկութեան ցոյց տուած քարաստութեան չափ անտարբերութեան մասին երբ յանախ գրվում է մեր լրագրութեան մէջ, կարծես գրվում է ոչ թէ այն պատճառով, որ գրանք՝ այդ պակասութիւնները վերացվեն, այլ որպէս մոգական մի ձեւ հեգեանաց գրողները գրում են լրագրներում, իրանց պարքը կատարելու համար։

Հարիւրաւոր անգամ գրվել է և վիճաբան ասվեցավ ասվեցավ, թէ ինչպէս Թիֆլիսի առաջնորդարանը և բարեգործական ընկերութիւնը իրար մէջ գնդակի են խաղում այդ հիմնարկութիւններին գիմոց մարդ-աղքատներով։ Կարծեմ ոչ այնքան վաղ, «Մշակում» նոյն իսկ վիճաբանութիւն բացվեց այդ մասին, թէ ինչպէս աղքատները (եկուր տատապեսներ) մէկ գոնից միւսն են ուղարկվում, առանց որևէ օգնութեան։ Սակայն վերջը, ըստ սովորականի, հերքումների հեղեղը թափելով՝ բոլորն էլ արդարացան, բացի անբերեռ աղքատներից, որոնք չեն գտարում նրբանց հանգիստ խանգարելուց։ Թշուառութեան ծով դարձած մեր երկրի զանազան անկիւններից, գոնէ կեանքերն ազատելու, փախչելով գալիս են Թիֆլիս, ամեն բանից զըրկված-թալանված, թշուառ ընտանիքները և ոչ մի տեղ չը գտնելով, ուղղակի գիմում առաջնորդանիստ Վանքի մայր եկեղեցին, հատատ համոզված լինելով, որ այդտեղ ապատան կը գտնեն գոնէ մի, կամ երկու օրով։ Բայց ինչ է լինում իսկապէս այդ թշուառների զբաղութիւնը։ Նրանք մի օրով անգամ գիշերելու տեղ չեն գտնում և մնոր երեխաներով զիշերն անց են կացնում բաց երկնքի տակ, բառիս լայն իմաստով։ Զը խօսելով անցեալի մասին, որպէս կենդանի օրինակ առաջ բերեմ այն ընտանիքը, որ 5-6 մանր երեխաներով ծանրաբեռնված այս ցուրտս, կարիլի է ասել, թափված է զանգակատան տակ չոր ադիւաների վրա։ Սա ոչ առաջինն է և ոչ վերջինը կը լինի։

Որովհետև նման մոլորված տատապեալները ընկնելով այստեղ, ուղղակի գիմում են Վանք, և քանի որ ոչ ոք չէ կարող երաշխաւորել այդ աւտոմատիկ գաղթի հոսանքը դադարելու մասին և առաջներս էլ կանգնած է աղքատների անբարեշ թշնամի դաժան ձմեռը, մի ժամանակ, որ այլ ևս իրաւունք չի տայ «բարեիղձարար» բաց երկնքի տակ «քնելոյնել» մերկ ու բորկի թշուառ երեխաներին, այդ պատճառով համեստաբար խորհուրդ կը տայինք մեր նպատամատոյց յանձնաժողովին պ. պ. անդամներին, որոնք, ի դէպ, ոչ մի տատապալի չեն ուզում ճանաչել, եթէ նա չունի հայ-թուրքական կուռ տատեսատ, և մեր բարեգործական ընկերութեան, որ նոյնպէս ձեռքերը լուացած «քաւեալ է», այդ գիմող թշուառներին ձմեռվա սպանիչ ցրտերին ենթարկելուց խուսափելու համար, եթէ ոչ Վանքին կից, գոնէ նրա մօտերքում վարձէին մի ընակարան և նման «ակամայ հիւրերին», որպէս նախնական օգնութեան միջոց, ծածկի տակ գիշերելու թաղդին արժանացնէին։ Շատ ցանկալի է, որ խմբագրութիւնդ այս հարցը դարձնէր ամենալուրջ ուշադրութեան առարկայ։

Բագրատ Մելքումեան

Թիֆլիս, սեպտեմբերի 12-ին

«Тифл. Листокъ»-ի № 140-ում տպված էր. «Դաշնակցութեան» բաց թողած մի թուղթիկից քաղվածքներ, որտեղ խօսելով կուսակցութեան անունով կատարվող զանազան շանտաժների մասին, ինձ ևս հանարել են որպէս մինը այդ շանտաժիստներից։ Չընդունելով ինձ վրա ոչ մի մեղք, ձեր յարգելի թերթի միջոցով գիմում եմ կուսակցութեան, պահանջելով ընկերական դատ։ Կուսակցութեան՝ ընկերական դատը մերժելու դէպքում, իրաւունք պիտի համարեմ ինձ յայտարարելու, որ կուսակցութեան հաղորդածը մի սուտ սուտ է։»

Վերոյիշեալ նամակը տպագրվել էր օգոստոսի 27-ի «Тифл. Листокъ»-ում։ Սակայն մինչև այսօր Դաշնակցութեան կողմից ոչ մի պատասխան չեմ ստացել։ Այդ պատճառով ստիպված եմ նոյնը կրկնել հայկական մամուլում։

Արտէմ Նասրբեանց

Թիֆլիս, սեպտեմբերի 12-ին

«Մշակ»-ի 196-րդ համարում վրդովմունքով կարդացի «Մեծ-Ախպէր» ծածկանունով տարբերված նամակը։ Կան յեղափոխականներ, որոնք կեղծ անունով էլ են յայտնի. իսկ մենք չենք ճանաչում ամենևին այդ «Մեծ-Ախպէր»-ը, որը իրան երևակայում է մեծ, շատ մեծ տաիւ, և մի թաթի հարուածով չարաչարում փոքրիկ գորտին—կոմսին։ Ցիշում էք փղի և քոթոթի առածը։ Դուք մտել էք հենց քոթոթի գերում։ Դուք արհամարհում էք «կալատուներին, քիսաչիներին, քաչալներին». բայց հաւատացած եղէք, որ մարդիկ մեծ են իրանց հոգով միայն։ Բաչալը մարմնապէս է պակասաւոր, իսկ դուք, զբաղդաբար, բարոյապէս։ Այն ճանիրը, որի մէջ դուք ձեզ ազատ զգալով գործում էք—շուտով, շատ շուտով կը ցամաքի...

Կոմս ասել է. «Կարծեմ ժամանակ է որ տաճկահայերը ստեղծեն իրանց ջանքերով յեղափոխական գործ, յեղ. գործիչներ երկրում, որից յետոյ ռուսահայ մարքը տարբերը բոլորովին հաւատացած եմ չեն պահայ իրանց եղբայրական օգնութիւնը»։ Դուք ազատագրում էք նրա միտքը և գոչում. «Պ. Կոմս, դուք մեզանչելով մեզանչում էք այդպիսի մի պատկառում գցել ռուսահայերի և տաճկահայերի մէջ. մեր ռուսահայ եղբայրները ձեզ, սկզբից մինչև այսօր ուրախութեամբ մասնակցել են մեզ և տուել են բաւական թւով զոհեր ու հերոսներ»։ Պարոն Կոմսը չէ ուզանում, որ ռուսահայ եղբայրները մասնակցել են և զոհեր են տուել տաճկահայ գործին։ Դուք այնքան խելացի էք հասկանում, որ չէք հասկանում նրա խօսքի իմաստը։ Նա ասում է պարզապէս, ինքը տաճկահայը պէտք է լինի երկրի յեղ. գործի զեկավար, այն պարզ պատճառով, որ նա աւելի լաւ ծանօթ է ժողովրդի հոգեբանութեան, երկրում տիրող պայմաններին ու հանգամանքներին։ Այդ ասում է ոչ թէ միայն Կոմսը, այլ բոլոր լուրջ խորհող մարդիկ։ Ռուսահայ եղբայրները պէտք է լինեն օժանդակողներ։ Ինչպէս մինչև այժմ եղել է, եթէ գանվեն մարդիկ, որոնք դէնք վերցրած ցանկանան գնալ երկիր, նրանք ազատ են և ուրախութեամբ կընդունվեն։ Մինչ թէ Կովկասում հայ-թուրքական ընդհարումներին տաճկահայերը չը մասնակցեցին և գոհեր չը տուին։ Այսպէս պատկերման ոչ մի խօսք չէ կարող լինել։ Այդպէս կարող են խեղաթիւրել ձեզ պէս ճանճաւէր զորտերը միայն։

Մի ճանէք անկեղծութեան, մաքրութեան աշխարհից, երբ դուք դրանցից զուրկ էք։ Երեսցէք ձեր իսկական դէմքով. կեղծել, սըտել տարուկի յատկանիշներն են։ Եւ յետոյ դուք որ ասած էք, քաղաքիս ունեցէք գոնէ ձեր իսկական անունով դուրս գալու։

Գասպար

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ օրերս սպասվում է Կաթուղիկոսի գնդակը, որի հիման վրա բոլոր ծխականը քանանները պարտաւոր են կազմել այն ծխերի ցիշ և լիակատար ցուցակը, որոնք ընտրողական իրաւունք ունեն։

Երևանի գեներալ-նահանգապետը հաղորդում է Փոխարքային, որ Զանգեզուրի գաւառում գործող էսկադրոնի հրամանատարը տեղեկացնում է, որ թուրքաց չորս գիւղեր այրված են, ընակիչները փախել են, գիակները ընկած են բաց երկնքի տակ, իսկ դիերի տաւարը քշել տարել են։ Այս բոլորը կատարվել է 7 հայ գիւղերի ընակիչների միջից կազմված աւազակախմբերի ձեռքով։ Կասկածի տակ է նաև Մեղրի մեծ գիւղը։ Փախստականները օգտվելով էսկադրոնի շրջելուց, կամեցել են վերադառնալ իրանց գիւղերը, բայց հանդիպելով չարագործներին և տալով 2 սպանված—կրկին յետ են վերադարձել։ Էսկադրոնը աւազակախմբերի չէ հանդիպել։ Նահանգի միւս գաւառներում հանգիստ է։ («П. А.»)

Թիֆլիսում ստացված տեղեկութիւններին նայելով, կոմս Ս. Ի. Վիտտէն սեպտեմբերի վերջերին սպասվում է Թիֆլիսում, ուր կը մնայ մի քանի օր, իսկ յետոյ կը մեկնէ Սոչի։

Գանձակի նահանգապետը մերժողութիւն է յարուցել Կովկասի բարձր իշխանութեան առաջ, որ թոյլատրվի բաց թողնել պետական անասուններից փայտ Զայլիւռաբ և Կաղանբուլաղ գիւղերի ընակիչների համար, որոնք ստացել են հայ-թուրքական անկարգութիւնների ժամանակ։ («Кавк.»)

Սեպտեմբերի 10-ին, երեկոյեան մօտ ժամը 7½-ին, Զօկզալնի և Գօգոլևսկի փողոցների անկիւնում մի քանի զինված չարագործներ կողոպտելու նպատակով յարձակվել են Գալստան Աւետիքեան Խաչիկեանի վրա, և գետնի վրա վայր գլորելով նրան, մի անգամ տարձանակ են արձակել, ոչ մի վնաս չը պատճառելով նրան։ Խաչիկեանն էլ մի քանի անգամ տարձանակ է պարակ. կողոպտողները անյայտացել են։

—

Բագուից հաղորդում են, որ այնտեղ, սեպտեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին Բալախանսկի և Կրասնօվոդսկի փողոցների անկիւնում գտնվող Գլազայի դեղատունն է մտել մի անյայտ մարդ և սուրը ձեռքին դիմել դեղատան գանձապահ Սօֆիա Ծատուրեանին և փող պահանջել։ Ծատուրեանը վախից դուրս է փախել բակը, իսկ չարագործը, բաց անելով արկղը, բայց փող չը գտնելով, պահանջել է այնտեղ գտնվող ծառայող Լեվինից ցոյց տալ փողի արկղը, որը չարագործը դատ. փակված։ Զարագործը տեսնելով, որ արկղը չէ աշխողվում բանալ և Ծատուրեանի բարձրացրած աղմուկից ժողովուրդ է հաւաքվում, դուրս է փախել փողոց և փորձել է փախչել, բայց մօտ վազող Թաղային վերակացու Սօկոլօվսկին և մի ոստիկան բռնել են նրան. երեաց, որ նա բագուեցի Նիկոլայ Կուզնեցօվն է։

—

Սեպտ. լոյս 10-ի գիշերվայ 12-ի մօտերը, Դիդուբէում, Շերէմետեվի փողոցում գտնվող Սիմէօն Դուլաեվի բնակարանն են ներս խուժում 10 զինված անձինք և ոյժով կամենում են փախցնել Դուլաեվի աղջիկ Նատալիային. սակայն վերջինս ծնողների հարցանքների հետ կարողանում են խլել աղջկան չարագործների ձեռքից, որով կռուի ժամանակ չարագործները մի քանի վէրքեր են հասցնում դաշտոնով Դուլաեվի կնոջ երեսին։ Փախցնելու անջող փորձից յետոյ՝ չարագործները դէպի օդը մի քանի անգամ տարձանակ պարպելով—անյայտանում են։ Դուլաեվի ասելով, յարձակվողներից 4-ը եղել են ելէքտրաքարշի անօնիս ընկերութեան ծառայողներից։

—

Սեպտեմբերի 7-ի գործադուլին մասնակցող Նօվէլի պրօմիսլային 65 և Կոստիական Ընկերութեան 22 բանուորները, որոնք բանարվված էին Բագուի բանտում և պէտք է նաև ազատվէին իրանց հայրենիքը, Բագուի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ ազատված են բանտարկութիւնից։ («Баку»)

—

Մօտ օրերս Բագուում լոյս կը տեսնի, բացառապէս երկուշաբթի օրերը, մի նոր լրագիր։ Այդպիսի հրատարակութեան պահանջ արդէն վաղուց էր զգացվում («Б.»)

—

6-րդ քաղաքամասի ընակիչները խնդրել են քաղաքային վարչութիւնը ստիպել անօնիմ ընկերութեանը, որպէսզի Վ.օրնցօվսկայա փողոցի վրա ելէքտրաքարշի երթևեկութիւնը սկսվի առաւօտեան 7 ժամից ոչ ուշ։

—

Երկրագործութեան և պետական կալուածքների Թիֆլիսի վարչութիւնը մօտ օրերս ուղարկել է Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան 1906 թ.ի վերջին 3 ամսվայ համար վճարելիք 2000 ռուբլին։

—

Երէկ, սեպտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 10-ին տեխնիքական մասնաժողովը՝ բաղկացած նահանգական տեխնիքից, սրա օգնական Բօգոյաւլով և Թիֆլիսի ոստիկանապետ պաշտօնակատար Մանդրիկինից, քննել և դիտել է Թիֆլիսի արքունական թատրօնը, որով ամեն բան կարգին է նկատվել, և որի մասին մասնաժողովը կազմել է հարկաւոր արձանագրութիւն։

—

Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնակատար Մանդրիկինը հրամայել է Թիֆլիսի քաղաքային ոստիկանութեան ռեզերվի կառավարիչ Մօսատիրսկուն թողնել իր պաշտօնը։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ ուսուցչական պրոֆէսիօնալ միութեան բիւրօն ընդունում է խնդրատուներին Ներսիսեան զպրոցում ժամը 4—6-ը։

—

1906 թ. պետական եկամուտ հաշուով, ամբողջ ոստիկանութեան ծախսը հաշուած է 28,480,927 ռուբլի, անցեալ 1905 թ.ից 762,839 ռուբլով աւելի։

—

Ինչպէս աղաղակ է իմանալ «Знаніе» թերթին, «Сегодня» թերթում երևացած և մայրաքաղաքի ու գաւառների համարեա թէ բոլոր թերթերի արտատպած գեն. Շերբինինի «գրութիւնը» կազմել և մշակել է գեն. Շերբինինի դիւանատան նախկին կառավարիչ Գուրօվիչը։ Ինչպէս յայտնի է պ. Գուրօվիչը Կոլիսից հեռացաւ գեն. Շերբինինից աւելի շուտ, և իր նախկին ծառայութեան այլևս չի վերադառնայ։

—

Ներկայումս Թիֆլիսի գիմնազիաներում ազատվել են Ե. Ս. Աբիսաղօմի անունով 5 թոշակաւորների տեղեր, որոնցից մէկը առաջին արական գիմնազիայում, երկուսը 2-րդ արական գիմնազ. և մի-մի հատ էլ 1-ին և 2-րդ իգական գիմնազիաներում։

—

Եկատերինբուրգում ոստիկանութիւնը գրաւել է սոցիալ-յեղափոխականների տպարանը։ («СП. А»)

—

Զիպիրենի շրջակայքը բռնկվել է ապրարային անկարգութիւններով

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԵՏԷ

Ինչպէս յայտնի է, Կրետէն Աբդիլ-Համիդի բռնակալ լուծից ազատվելով չէ բաւականանում. նա ցանկանում է միանալ մայր-Հայրենիքին՝ Յունաստանին։ Բայց «պաշտպան» պետութիւնները՝ իրանց յատուկ նենգամտութիւններով առաջնորդված, արգելք են հանդիսանում կրետացիների տենչանքին, յետաձգում են մի ելք, որը անխուսափելի է։

Կրետացիները այդ չկամութեան բաղխվելով՝ ապատամբվեցին նոյն իսկ «պաշտպան» պետութիւնների դէմ և տեղ-տեղ արիւնահեղ կռիւ առաջացաւ միջազգային զօրքի հետ։ Կրետական ապատամբութիւնը ընկճվեց, բայց մութեան գաղափարը մի վայրկեան անգամ չէ դադարում նրանց ոգևորելուց։

Կրետացիները մի պահ կարծեցին, թէ շատ բան կախված էր իրանց իշխանից, Գէօրգիից, բայց նա չէ ուզում կամ չէ համարձակվում բացարձակ պաշտպան կանգնել իրանց երազներին։ Եւ սկսվեց մի խուլ, հետզհետէ համարձակ զժգոհութիւն Գէօրգի իշխանի դէմ։ Իշխանը իրան զգաց վատ գրութեան մէջ և հրաժարական տուեց, որը ընդունեցին պետութիւնները և որոշեցին նրա տեղ դնել մի ուրիշը՝ դարձեալ յոյն։ Կրետացիները շուտով նկատեցին, սակայն, որ երկրորդ լուծումը առաջինից աւելի վատթար էր և սկսեցին նորից պահանջել իրանց իշխանին։

Այսպէս, Կրետէի ազգային ժողովը, սեպտ. 5-ին (ն. տ.) նիստ գումարելով, վճռեց ուղարկել հեռաւոր հեռագիրը պետութիւնների արտաքին մինիստրներին.

«Կանէայում հաւաքված Կրետական ազգային ժողովի մեծամասնութիւնը, ներկայացուցիչ Կրետական ժողովրդի ստուար մեծամասնութեան, վշտացել է այն յամառ լուրերից, որոնք ամեն օր հեռվնտէ աւելի հաստատվում են, թէ Գէօրգի իշխանը պէտք է թողնել իր պաշտօնը, որոշում, որ առաջ կը բերէր մեր երկրի քաղաքական կացութեան անկումին։

«Կրետական ժողովրդի ստուար մեծամասնութիւնը, որը պատրաստ ունենք ներկայացնելու, սկզբից և եթ նկատել է Գէօրգի իշխանի ներկայութիւնը Կրետէում, որպէս իրական երաշխաւորութիւնը ազգային ձգտումների իրագործման։ Հետևաբար, Կրետացի ժողովուրդը վշտացած է այժմ այն յապաղումից, որ տեղի է ունենում նրա ցանկութիւնների կատարման մէջ և իշխանի ներկայութիւնը կըզրկում նկատում է անհրաժեշտ նրանց իրագործման համար։

«Մեր զէնքերի բարձրակամ յանձնումը իշխանին, այս բէմիի սկզբնաւորութիւնից իսկ, և հասարակական ապահովութիւնը, որ հետևանք եղաւ դրան, այդ բոլորը կապված էր միմիայն՝ իշխանի անձնաւորութեան հետ։

«Ներկայացնելով այս փաստերը ձեր գնահատութեան, խնդրում ենք ձեր կառավարութիւնից համաձայն պաշտպանութեան վիճանձն սկզբունքի և կրետական ժողովրդի նիւթական և բարոյական շահերի հոգացողութեան, ընդունելու, վաւերացնելու, որ իշխանը Մայր Կրետէում, պայման, որ մենք նկատում ենք անհրաժեշտ կրետական ժողովրդի նիւթական բարեկեցութեան»։

Ստորագրել են այս հեռագրի տակ ազգային ժողովի 114 անդամներից 78 քրիստոնեայ անդամներ։ Մահմեդական պատգամաւորները, թուով 16, չեն մասնակցել այդ գործին։

Այս դէպքերի վրա Գէօրգի իշխանը հարկաւոր համարեց լռութիւն չը պահպանել։ Նա հետևեալ օրն իսկ կրետացիներին ուղղեց յետագայ նամակը։

«Կրետացիներ.

Ցաւով լսում եմ, որ իմ մասին շրջում են զանազան շշուկներ, որոնք ամեն կողմ առաջ են բերում յուզմունքներ և զայրոյթ։

Կարծում եմ, որ իմ պարտականութիւնն է յանձնարարել բոլոր շահագրգռվածներին համբերութիւն, խաղաղութիւն և զգուշութիւն, որոնց ապացոյցները պէտք է տայ ժողովուրդը այժմ, աւելի քան երբէք իր հիանալի ճկիրի մէջ հանելու համար իր վիճակի բարելաւման։

Հաւատացած եղէք, որ այն պետութիւնները, որոնք պաշտպանում են կղզին, իրանց ձեռքից եկած ամեն ինչը կանեն հասնելու համար այդ նպատակին։ Պէտք է որ դուք ոչ միայն սպասէք նրանց բարձր որոշման կարգապահութեան կատարեալ ոգով, այլև շնորհակալութեամբ ընդունէք այն որոշումները, որ նրանք ձեզ կը յայտնեն և լսէք կարծիքները այն բարձրատիճան անձանց, որոնք հոգածութեամբ և անկեղծութեամբ աշխատում են կղզու բարգաւաճման։

Բոլոր շահագրգռվածների հայրենասիրութեան կոչ անելով՝ վստահ եմ, որ դուք կը լսէք իմ ձայնը և կը փակէք ձեր ականջները ուրիշ ամեն հակառակ կարծիքի առաջ»։

Գէօրգի

Գէօրգի իշխանը, ինչպէս ամեն իշխան, քարոզում է կարգ ու խաղաղութիւն։ Նա երևի համոզված է, որ կրետացիների չափազանց ոգևորութիւնը, նոյնիսկ զինված ապստամբութիւնը ոչնչի չէ կարող յանգել։ Նա գիտէ, որ պետութիւնները, զրված իրանց ներքին հաշիւներից, տրամադիր չեն այժմ բաւարարութիւն տալու նրանց պահանջներին։ Անցեալ գարնան Էդուարդ VII-ի այցելութիւնը Յունաստան, նրա հետ բանակցութիւնը կրետական հարցի մասին, անտարակուսելիօրէն ապացուցեց, որ պետութիւնները հասունացած չեն համարում կրետացիների առաջարկած լուծումը։ Անգլիան ինքը, մասնաւորաբար, հակառակ է այդ լուծման։ Գուցէ նա թագուն նպատակներ ունի յարմար րօպէին կուլ տալ Կրետէն, ինչպէս կուլ տուեց Կիպրոսը։ Ո՞վ գիտէ, բոլոր պետութիւնների և գլխաւորաբար Անգլիայի տամոքսը այնքան լայն է և զօրեղ։ Գուցէ այդպիսի տնաճոյ ելքի առիթ չը տալու, այդ ելքի վախից է, որ Գէօրգին քարոզում է կրետացիներին կարգ ու հանգստութիւն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 սեպտեմբերի

ԲԱԹՈՒՄ, 10 սեպտեմբերի։ Երէկ չարաքարձրութիւնները յարձակվեցին Ծօձուլկի մզգուտի ջրանցքը կառուցանողի վրա, որը տանում էր բաւականին խոշոր գումար, խլեցին 300 ռուբլի և վիրաւորեցին մի անցորդ։

ՎԻԼՆԱ, 10 սեպտեմբերի։ Անգօխլակի փոքրացած զօնեան կօղակների գնդի զինուորները բռնեցին իրանց հետ խօսող ագիտատորին և տարան պատիկանատուն։

ՉԻՐՆԻԿՕՎ, 11 սեպտեմբերի։ Նահանգապետը հրատարակեց մի հրման լրագիրներում, որով յայտնում է, որ աչքի առաջ ունենալով չարագործների յաճախակի կողոպտումները, որոնք շատ անգամ կրում են ժանդարմների հագուստներ, այն պաշտօնական անձինք, որոնք կատարում են խուզարկութիւններ, պարտաւոր են իրանց անձնաւորութիւնները վաւերացնող թղթեր ունենան։

ՎԻԼՆԱ, 11 սեպտեմբերի։ Երէկ կ՝ լանաւորվեցին ժողովի մասնակցող 39 հոգի. գրաւված է մի գրութիւն, որը վերաբերում է զինուորական յեղափոխական կուսակցութեան։

ՍՕՖԻԱ, 11 սեպտեմբերի։ Բուլգարական իշխանը այսօր վերադարձաւ արտասահմանից։

ՐԻԳԱ, 11 սեպտեմբերի։ Վէնդէնսկի և Ռէվէլսկի փողոցների անկիւնում տարձանակի վից գնդակներով տեղն ու տեղը սպանվեց ելէքտրաքարշի վերանսկիչ Ֆիլրօզ։ Կալանաւորվեց մի բանտոր, որը մասնակից էր ըսպանութեան մէջ։

ԿԵԼՁԻ, 11 սեպտեմբերի։ Զինուորական-դաշտային դատարանը Սոսմաշէվիցկի գնդի 6 գնդացիներին դատապարտեց մահվան զընդակահարութեան միջոցով։ Վճիռը ի կատար ածվեց։

ՏԱՄԲՈՎ, 11 սեպտեմբերի։ Գիշերվայ ժամը 1-ին Կրկեսից վերադարձող քաղաքային պրիստաւ Կօմուսիայի վրա 3 չարագործներ կրակեցին. թեթև վիրաւորված են պրիստաւը և կինը, ծանր վիրաւորված են քաղաքապահ Մատվեյեվը և սարածնիկ Ժուկով։ Պրիստաւը կրակեց փախչող չարագործներ ետևից, բայց նրանք կարողացան անյայտանալ։

Կ. ՊՕԼԻՍ, 11 սեպտեմբերի։ Աստրը Ունգարիայի զինվոր Բարոն Նալիչը հրաժարական տուեց։ Դեսպանին շնորհված է կոմսութեան տիտղոս։

12 սեպտեմբերի

ԲԵՐԼԻՆ, 10 սեպտեմբերի։ Ժանդէմոսի բացվից սոցիալ-դէմօկրատների համագումարը։ Մանդէյմսկի պատգամաւոր Դրէսբաքը և Բէբէլը շնորհաւորական ճառեր արտասանեցին։ Նախագահներ ընտրված են Զինգէր և Դրէսբաքը։ Սոցիալ-դէմօկրատների օրգան «Ֆոր-վէրդ» ասում է, որ համագումարի ամենագլխաւոր նպատակներն են—մայիսի 1-ի տօնումը ընդհանուր քաղաքական գործադուլի հետ միասին և պրոֆէսիոնալ միութիւնները։ Մի քանիսը պահանջում են որ մայիսի մէկը երեկոյեան տօնեն, ի նկատի առնելով, որ անկարելի է կանգնեցնել աշխատանքները, և մասնակի գործադուլները ցանկալի չէ. այնուամենայնիւ սոցիալ-դէմօկրատների մեծամասնութիւնը չէ բաժանում իր կարծիքը ընդհանուր քաղաքական գործադուլի առիթով ունեցած հայացքները այն ընդդիմադիր դիրքի իբրև հակամէտ, որպիսին ունի պրուս-գերմանական բէկեցիան։ «Ֆորվէրիսայի» կարծիքը պէտք է համարել անիրագործելի։ Այդպիսի գործադուլը չէ հասնում զգալի հետևանքների և հակասում է դասակարգային կռուի գործունէութեան, որով զնում է սոցիալ-դէմօկրատան։

ԲԵՐԼԻՆ, 11 սեպտեմբերի։ «Կէնիշէ Ցայտուն»-ի թղթակիցը Բէրլից հաղորդում է Շվէյցարիայի հասարակական տրամադրութեան փոփոխումը ռուսաց յեղափոխականների վերաբերմամբ։ Շվէյցարացիք բողոքում են, որ իրանց հիւրասիրութիւնը ի չարն են գործ դնում, և մասնաւորապէս Ինտերլանկէնում տեղի ունեցած սպանութեան դէմ։ Շվէյցարական բանտորների մի մասի յեղափոխական տրամադրութիւնը, որը արտայայտվեց վերջին գործադուլների ժամանակ, վերագրում են ռուսաց յեղափոխականների ազդեցութեան, որոնք ապատ են նախապաշարումներից։ «Կէնիշէ Ցայտուն»-ը Շուէյցարիայից հաղորդում, է որ շվեդական «Սկանդինավիա» շոգենաւը Ֆինլանդիա գնալու ճանապարհին Բօլոգնայի մօտ ընկվեց երկու ռուսաց նաւերից։ Շոգենաւի բեռը, որ ի միջի այլոց կազմում էր 3000 հրացանից և անագին քանակութեան փամփուշտներից, գրաւված է։

ՀԱՎԱՆՆԱ, 11 սեպտեմբերի։ Ինչպէս երևում է ապատամբութիւնը կը վերջանայ նախքան Միացեալ-Նահանգների միջամտութիւնը։ Ստատս-սեկրետար Տաֆթը և նրա օգնական Բօկօնը տեսակցութիւն ունեցան յեղափոխականների պետերի հետ։ Յեղափոխականները ընդունեցին 7 հոգուց բաղկացած մի կոմիտէ, որը վաղը պէտք է սկսէ բանակցութիւններ հաշտութեան համար 1500 ամերիկական նաւաստիներ և ծովային հետևակ զօրք պատրաստ պահում են ափ իջնելու համար։ Հաւանայում, որտեղից նրանք 300 վագոններով կուղարկվեն Կոլումբիա։ Այդ միջոցը ձեռք կառնվի այն դէպքում, երբ ապատամբները բանակցութիւնների անպղող անցնելու դէպքում կը յարձակվեն քաղաքի վրա։

ՍԸԳՋԻՆ, 11 սեպտեմբերի։ Կողոպտված է վաճառական Երօմազօվների ընտանիքը, ոչ-բոնցից խլել են փող և թանկագին իրեր՝ 150,000 ռուբլու։

ԼՈՒԻԱՆՍԿ, 11 սեպտեմբերի։ Առաւօտեան ժամի 5-ին գործադրվեց աւազակ Զերնօպիռովի մահվան դատավճիռը։ Նրա ընկերը դատապարտված է անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանքների։

ԼՕՆԴՕՆ, 11 սեպտեմբերի։ Իրլանդացիների պարպլուին Ռէդմօնդը արտասանեց մի ճառ, որի մէջ գանգատվում է, որ կառավարութիւնը չէ կատարում իր խոստումը, այն է շնորհել Իրլանդիային ինքնավարութիւն։ Իրլանդիան թոյլ չէ տալիս ոչ մի պայմանադրութիւն և պահանջում է հօմրուլի կատարեալ իրագործումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 26-ից բացվում են գիւղատնտեսական մասնաւոր կուրսեր, որոնք հիմնում են մի խումբ ուսուցիչներ։ Կընդունվեն առանց դիպլոմի, դասախօսութիւնները կը յարմարեցվեն գիմնազիայի 6-րդ դասարանի գիտութեան։ Դասման վճարը տարեկան 80 ռուբլի է։ Ամբողջ դասընթացքը կը տևի 3 տարի։ Առաջին կուրսում կընդունվեն 250 հոգի։

ԽԱՐԿՕՎ, 11 սեպտեմբերի։ Համալսարանի դահլիճում հաւաքվեցին 400 ուսանողներ. բէկոր Բէյզարովը արտասանեց մի ճառ, որի մէջ մատնացոյց արեց, որ գոյութիւն ունի ուսանողների մի խումբ, որը հակառակ է համալսարանի բացման, և խնդրեց նրանց չը խանգարել պարապել ցանկացողներին։ Ուսանողները բէկոբի ճառը ընդունեցին ծափահարութիւններով։

ՍՕՍՆՕՎԻՑԻ, 11 սեպտեմբերի։ Երէկ Դեմբօվագուբայում բանտորներ ժողովի ժամանակ վրա հասան ոստիկանութիւնը և կօղակները։ Տեղի ունեցաւ հրացանաձգութիւն. բանտորներից սպանվեցին 2 հոգի. մէկը խեղդվեց. վիրաւորվեցին 5 հոգի, որոնցից մէկը կին է։ Կալանաւորվածների մօտ գտնված են 18 բրաուներներ և թռուցիկներ։

ՍՏՕԿՀՕԼՄ, 11 սեպտեմբերի։ Շաբաթ օրը Վէստմանկի փողոցում, մի տան մէջ, կալանաւորվեց Ֆինլանդիայի կարմիր գվարդիայի պետ Լիստօ 2 ֆինների հետ միասին. տան մէջ բացված է ռումբերի ահագին պահեստ։

ԿԻԷՎ, 11 սեպտեմբերի։ Զինուորական դաշտային դատարանը գիւղացի Շրապային մահվան դատապարտեց կախաղանի միջոցով։ Սօսնօվիցկի գաւառի գիւղական պրիստաւի սպանութեան նպատակով կատարած մահափորձի համար։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ, 11 սեպտեմբերի։ Զորս չարագործների. կողոպտեցին Նաչալնիկի խանութը. գումարը 12,200 ռուբլու է։

ՐԻԳԱ, 11 սեպտեմբերի։ Ալէքսանդրեան փողոցում ելէքտրաքաշի վրա նետվեց մի ռումբ, որը պայթեց վագոնից մի քանի քայլ հեռու, ոչ ոքին վնաս չպատճառելով։ Ռմբաձիգը բռնվեց և զինուորներից վիրաւորվեց. պարզվեց, որ նա Զէնտօխով քաղաքացի Ադամուն է. յանձնվեց զինուորական-դաշտային դատարանին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻԻԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9 —10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. իւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1 ½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1 —2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Յ. Գուլբենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկեանաց։
Ե. Գ. ԱԲԵԱՆՑ—7—7 ½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (գօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ժամական ժամճամարներով։

Ելիզավետինսկայա փողոց, 101, տէլէֆոն 1026

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ականջի, ներքին և ելէքտրօ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԵՄԻՏՐՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԳԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԳԻՄՕՆՑ. 1—2 ժ. վերաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՁԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՅԷԼ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոր ոգնէս և ծաղկեանաւորիւն և նամատների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր անոթակներից և առանձին նոմերներից։

(չ. ու. կ.) 89—100

Լոյս տեսաւ առաջին ապագրութեամբ
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

Ռուսաց մայրենի լեզուի Չորրորդ գիրքը

ԳԻՆՆ է 90 կոպէկ։

Գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրախանութում, ուր վաճառվում են և առաջին, երկրորդ և երրորդ գրքերը։ Հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղչ է լինում։ Ցօրինողի հասցէն՝ Лермонтовская № 4.

7—10

Յովհաննէս Դաւրեանի

հրատարակութեամբ

Լոյս ենն տեսել

№ 5. Մօպասան, «Մի կանք», թարգմ. Ս. Տ.-Անանեան . . . . . 1 ր.
№ 6. Ա. Ագարոնյանց, «Ոչսօվեկ խլեբա», «Петухъ» թարգմ. Վ. Բաբիեան . 10 կ.
№ 7. Անենկայա, «Հանրապետութիւն» թարգմ. Ս. Տէր-Անանեան . 5 կ.
№ 8. Ա. Բէբէլ, «Քրիստոնէութիւն և Սոցիալիզմը» թարգ. Ս. Տէր-Անանեան 10 կ.

Շուտով լոյս կը տեսնեն՝
№ 9. «Զէրցերբա»
№ 10. «Կորչեն Սոցիալ-Դեմոկրատները»։

Դիմել հրատարակչին՝ Армянскъ, «Тавр. губ.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրավաճառներին։

4—6

Իմտելիգենտ ընտանիքում պատրաստում են աշակերտ-աշակերտուհիներ միջնակարգ դպրոցների համար մինչև V դասարանը։ Ընդունվում են թէ գիշերօթիկ և թէ երթևեկ։

Նոյն տեղում աւանդվում են և՝ դաշնամուրի դասեր։ Հասցէն՝ Малая Ванкская ул. д. Апіянца, № 15, հարցնել 4—7 ժամը։

ե. հ. շ. կ. 1—5

Թեյաւի

ծխական երկսեռ ուսումնարանի համար

ՀԱՐԿԱՒՈՐԷ

երկու ՎԱՐԺՈՒՀԻ։ Պայմանների մասին դիմել հետևեալ հասցէով՝ Николаевская, 61.

չ. հ. 1—2

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր են ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Ցանկացողները կարող են դիմել՝ Թիֆլիս, Гановская ул., № 7, училище и пансіонъ Меликъ-Джанова.

ա. օ. 1—5

Մի ինտելիգենտ ընտանիքում ընդունվում են

ՆԱԽԼԻԲՆԻԿՆԵՐ

(բացառապէս աշակերտուհիներ)

մասնչելի գներով։ Լսա ցանկութեան կարելի է դիմել հետևեալով՝

Հարցնել «Մշակ»-ի խմբագրատունը՝ օրիորդին, կամ Բէբութեան փող. տուն Զուրաբովի № 49, տիկ. Մ. Ռ.-ին։

1—5

„Գուտտենբերգ“

գրախանութում վաճառվում է

«Նախագիծ ծրագրի հայոց եկեղեցական տարրական դպրոցների»,

որ Կենտրոնական ժողովի կողմից արած անհրաժեշտ փոփոխութիւններով հաստատված է Վեհափառ Կաթողիկոսի կողմից։

ԳԻՆՆ է 30 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ». 1—3

«ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ»

Զեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար Նոտաներով և նկարներով.

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿԻ

Գինն է 3 ռուբլի, իսկ վարժուհիների, ուսուցիչների համար 1 ր. 80 կ.։

(չ) շ. 1 անգամ 1—5

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 12—2, երեկոյեան 6—8։ Սօլոլակ, անկիւն Բէյհութեան և Պասկեվիչի փողոց, № 33/15։

(ա. օ.) 6—100

Նազարաբաթ գիւղի (Հին-Նախիջևանի գաւառ) միդասեան դպրոցի համար հարկաւոր է՝

ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ

շաբաթական 24 դասով, տարեկան երեք հարիւր ռուբլի ռոճիկով։ Դիմել հետևեալ հասցէով. Нахичеванъ (Эрив. губ). учителю Михаилу Саакянцъ։ 2—2

Թարգմանվում է եւ շուտով պատրաստ կը լինի

ԲՐԻՕԻ

«Порченые» (Les Avaries)

պիեսը

2—5 Սալլիմեան

Մի հայ ընտանիքում ընդունվում են

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

Լիակատար պանսիօնով

Պայմանները նպաստաւոր են. Гановская, № 12։ 2—3

Ընդունում եմ պատուէրներ՝ գրող մեքենայ

Բեմինգտոնի

վրա աշխատելու։ Վելեմինսկի փողոց, № 6, ընակարան առաջնաբոյժ Տէր-Նիկողոսեանի։ 2—3

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

Սօլիտերի դեմ

(տափակ ճիճու) որով յընթացս քսան և ութ տարվայ բժշկվել են աւելի քան տասը հազար մարդ ցանկացողները պէտք է դիմեն պատրաստողին՝ հետևեալ հասցէով. Թիֆլիս, Գօնչարնայա փողոց № 33, Մ. Հախնազարեանցին։ Գինն է Թիֆլիսում 4 ռուբլի, Թիֆլիսից դուրս, ճանապարհածախսով, հինգ ռուբլի, որ ստանալուն պէս իսկոյն ուղարկվում է։

3—10

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Մայրերի և դաստիարակչուհիների համար։

Միքայէլեան փող. № 138.

Ունկնդիրների ընդունելութիւնը շարունակվում է։

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 15-ին։

3—3

Եղեսիայի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են։

Ի դիմաց հոգաբարձութեան՝

աւագ ուսուցիչ՝ Վլաս Վլասեանց

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօստային	Մարգասաբ.	Արագ.	Ապրանք.
Բաղուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երկկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաքու հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաքուից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը ամեն օր, բացի տօն օրերից, Գրիբօյէդովսկայա փող. № 8։

Նոր հրաւիրված են դասաւանդներ՝ դաշնամուրի դասերի համար Պետերբ. Կօնսերվատորիայի դաշնակահարներ՝ Վ. Ի. Շուէյն և Ի. Ս. Այսբերգ և Չութակի դասերի պ. Կօգան, վիոլօնչելի համար Պրագայի կօնսերվ. աւարտած Ե. Վ. Օտրուբա։

Յատուկ առարկաների դասատուներ.

Երաժշտութեան թէօրիա՝ երաժշտապետ Ն. Դ. Նիկոլայեվ, տարրական թէօրիա՝ սոլֆէջիո, զինուորական գործիքներով նուագահարութիւն և խմբական երգ՝ Պ. Պալլեվ, դաշնամուր՝ Մ. Զ. Դարաեվա, Ֆ. Կ. Կէսսնէր, Ա. Օ. Միղանդարի, Լ. Պոլակ, Ե. Կ. Ստախովսկայա, Լ. Լ. Տրուսկովսկիյ, Ա. Ի. Տուլաեվա, Տ. Ի. Տէր-Ստեփանեան, Մ. Ի. Ունտիլովա-Սարգաժվա, երգեցողութիւն՝ Լ. Կ. Արնօլդի, Չութակ՝ Վ. Բ. Վիլլաու և Վ. Ա. Սէմիգալով, կօնտրաբաս՝ Մ. Ի. Շէրշով, ֆլէյտա՝ Ե. Ֆ. Շիֆֆէր, կլարնէտ՝ Կ. Ե. Զենլաուբ, գօբոյ՝ Վ. յլա, ֆագոտ՝ Ֆ. Ֆ. Պավլատա, վատգօրնա՝ Ի. Ա. Մաշնէր, փող և տրոմբոն՝ Ի. Գրիգոնի, իտալերէն՝ Լ. Ա. Գրեվիտեր։ (չ. ու.) 1—2

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՂՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց զրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է ֆիզ պատրաստութիւն ունեցող անձերին ամառ առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր առևտրական լեզուի և բուսաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Հ. Վ. Աբրահամյանց, Николаевская ул. № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին՝ առանց պոստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (չ. ու. կ.) 5—6

ԴՈԿՏ. Կ. ՓԱՇՅԵԱՆԻ

«Պատկերազարդ Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւն»

Վաճառվում է մեր եղբէն անունով Տուրեցկի-Կաֆէէնի մագազինում, Գօլովինսկի պրօսպէկտ, տուն Անանովի։

ԳԻՆՆ է 6 ՌՈՒԲԼԻ

ճանապարհածախսով։

Գաւառներից կարող են ուղղակի մեզ դիմել կանխիկ վճարով։

Մեզ մօտ վաճառվում են նաև Դոկտ. Կ. Փաշայեան—Խանի